Արձանագրություն N 4/141

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2014թ-ի դեկտեմբերի 19-ի նիստի

Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոսների հավելավճարի հարցը /զեկ.՝ պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Ատենախոսության թեմաների հաստատում /զեկ. դոց. Խ. Գալստյան/:
3. Ասպիրանտների ատեստացիայի հարցը / զեկ.՝ Խ. Գալստյան/:
4. Ամբիոնի վարիչների ընտրության հարցը / զեկ.՝ Խ. Գալստյան/:
5. Ընթացիկ հարցեր. ա/Մագիստրոսական ծրագրի հրատարակության երաշխավորման հարցը:

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.

   ա/ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի հայցորդ Դիանա Սարգսյան. - «Ինտեգրացիոն գործընթացների և ազգային անվտանգության փոխկապակցվածության հիմնախնդիրները հետխորհրդային տարածությունում (Արևելյան գործընկերության երկրների օրինակով)» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Քեռյանին:

   բ/ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հայցորդ Հռիփսիմե Մարգարյան. - «Երիտասարդական քաղաքականության ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր Աշոտ Ենգոյանին:

   գ/ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հայցորդ Տաթևիկ Կարապետյան. - «Պահպանողականության դրսևորումները եվրասիական քաղաքական ինտեգրացման գործընթացներում.» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

   Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր Լևոն Շիրինյանին:

դ/ ԵՊՀ Հայցորդ Արեգ Սավգուլյանի թեկնածուական ատենախոսության թեման փոփոխել և հաստատել «Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության արտաքին քաղաքականությունը և Հայաստանը 1918-1921թթ.» ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Վահրամ Պետրոսյանին:

ե/ Ստելլա Ջանգոզյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման գործընթացը անկախ պետականության հաստատման պայմաններում» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար հաստատել քաղ.գիտ. դոկտոր Աշոտ Ենգոյանին:

2. ա/Ատեստավորել Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ Գոռ Թովմասյանին, 2-րդ տարվա ասպիրանտ Լիլիթ Բանդուրյանին, 3-րդ տարվա ասպիրանտ Արսեն Ջուլֆալակյանին, 3-րդ տարվա ասպիրանտ Անահիտ Կարոյանին:
բ/ Հաշվի առնելով, որ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ Գուրգեն Գյոդակյանը ասպիրանտուրայի 2.5 տարիների ընթացքում չի ներկայացել նախորդ ատեստացիաներին և չի կատարել իր աշխատանքային պլանը՝ չատեստավորել Գուրգեն Գյոդակյանին / հիմք՝ ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի նիստի որոշումը չատեստավորման մասին/:

3. Հրատարակության երաշխավորել Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Գրիգոր Բալասանյանի “ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում” դասընթացի մագիստրոսական ծրագիրը:
4. Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել ԵՊՀ Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի վարիչի թեկնածու Նուբար Չալըմյանի անունը:
բ/Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:

Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 18-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Չալըմյան Նուբար – 18 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

5. Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել ԵՊՀ Հանրային Կառավարման ամբիոնի վարիչի թեկնածու Վահագն Ագլյանի անունը:
   բ/Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:

   Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 18-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

   Ագլյան Վահագն – 18 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Խորհրդի նախագահ, պրոֆ. *Գ. Պետրոսյան*

Խորհրդի քարտուղար, դոց. *Խ. Գալստյան*